ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2025 թվականի N 123-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 12 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2025 թվականի ութերորդ նստաշրջանի հոկտեմբերի 14-ի թիվ 12 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՐՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 14
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 12 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 123-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2025 թվականի ութերորդ նստաշրջանի հոկտեմբերի 14-ի թիվ 12 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

/Զեկ. Վ. Սարգսյան/

2.Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին

/Զեկ.Ն. Խաչատրյան/

3.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2025 թվականի բյուջեի ինն ամիսների կատարման մասին հաղորդում

/Զեկ.Ռ.Մանուկյան/

4.Գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

/Զեկ.Ռ.Մանուկյան/

5.Տեղական վճարի արտոնություններ սահմանելու մասին

/Զեկ.Ա.Դավթյան/

6.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 164-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկ.Ա.Դավթյան/

7.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող գազատար խողովակաշարը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արմավիրի ԳԳՄ-ին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հանձնելուն համաձայնություն տալու մասին

/Զեկ.Ա.Հովհաննիսյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2025 թվականի N 124-Ա

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 16-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետով՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «Օն դիզայն» ՍՊ ընկերության կողմից Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Շահումյան փողոցի 20 հասցեում գտնվող Արմավիր քաղաքի Մ. Սիլիկյանի անվան թիվ 6 հիմնական դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տալ նախնական համաձայնություն:

2.Առաջարկել Արմավիր համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՐՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ , **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 14
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2025 թվականի N 125-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությունի օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2025 թվականի բյուջեի ինն ամիսների կատարման մասին հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՐՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 14
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 125 -Ա
ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջեի եկամտային մասը 2025 թվականի ինն ամսում ունի հետևյալ տեսքը.

	Պլան /հազար դրամ/	Կատարված /հազար դրամ/	
Վարչական բյուջե ,	2 213 802.0	2 199 097.4	99,3 %
որից՝ սեփական եկամուտներ	770 331.2	755 926.3	98.1 %
Ֆոնդային բյուջե	575 000.0	363 892.4	63.3 %
որից՝ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկ.	400 000.0	150 000.0	
Ընդամենը	2 388 802.0	2 412 989.8	101.0%

Արմավիր համայնքի 2025 թվականի բյուջեի ինն ամսում նախատեսված 2 388 802.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 2 412 989.8 հազար դրամ կամ կատարվել է 101 %-ով, սեփական եկամուտների գծով նախատեսված 770 331.2հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 755 926.3հազար դրամ կամ կատարվել է 98,1 %-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ վարչական բյուջեի եկամուտները գերակատարվել են 273 385.0 հազար դրամով կամ 14,2% -ով, իսկ սեփական եկամուտները՝ 66 873.7 հազար դրամով կամ 9,7 % -ով:

Արմավիր համայնքի 2025 թվականի բյուջեն ինն ամսում ըստ եկամտատեսակների կատարվել է հետևյալ համամասնություններով.

1.ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Հարկային եկամուտների գծով ինն ամսում նախատեսված 475 290.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 392 285.8 հազար դրամ կամ կատարվել է 82.5 % -ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 10 388.7 հազար դրամով կամ 2.7% -ով՝ այդ թվում.

1. Հողի հարկի գծով մուտքեր չեն նախատեսվել, փաստացի հավաքագրվել է 25 652.0 հազար դրամ,
2. Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար /նախորդ տարիների ապառքներ/ մուտքեր չեն նախատեսվել, փաստացի հավաքագրվել է 4 994.2 հազար դրամ,
3. Գույքահարկ փոխադրամիջոցների համար պլանով նախատեսված 296 820.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 236 689.2 հազար դրամ կամ կատարվել է 79.7 %-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ թերակատարվել է 14 000.0 հազար դրամով,
4. Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկը պլանով նախատեսված 178 470.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 124 950.4 հազար դրամ կամ կատարվել է 70.0 %-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 31 630.2 հազար դրամով կամ 33.9 % -ով :

2. ՏՈՒՐՔԵՐ

Տուրքերի գծով ինն ամսում նախատեսված 78 424.4 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 100 147.2 հազար դրամ կամ կատարվել՝ 127.7 %-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 570,4 հազար դրամով՝ այդ թվում.

1. Պետական տուրքերի գծով նախատեսված 26 476.7 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 26 924.9 հազար դրամ, կատարվել՝ 101.7 %-ով:
2. Տեղական տուրքերի գծով նախատեսված 51 947.7 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 73 222.3 հազար դրամ, կատարվել՝ 141 %-ով: Նույն թվում՝

ա) համայնքի տարածքում նոր կառուցվող օբյեկտների և շինությունների շինարարությունը սկսելու թույլտվության մուտքերը կազմել են 23 244.0 հազար,

բ) համայնքի տարածքում գտնվող օբյեկտները վերակառուցելու աշխատանքներ կատարելու թույլտվության մուտքերը կազմել են 3 99.5 հազար,

գ) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար փաստացի մուտքագրվել է 230.0 հազար դրամ,

դ) համայնքի տարածքում ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանքի ընթացիկ տարվա վաճառքի թույլտվության համար փաստացի մուտքագրվել է 16 559.1 հազար դրամ,

ե) համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար փաստացի մուտքագրվել է 4 775.0 հազար,

զ) համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար փաստացի մուտքագրվել է 6 997.5 հազար դրամ,

է) համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տարեկան նախատեսված 1 600,0 հազար դրամի դիմաց ինն ամսում հավաքագրվել է 1 825,0 հազար դրամ կամ տարեկան պլանը կատարվել է 114 %-ով,

ը) համայնքի տարածքում ընթացիկ տարվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության մուտքերի գծով ինն ամսում փաստացի մուտքագրվել է 13 717.9 հազար դրամ:

թ) համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի տարեկան թույլտվության համար տարեկան նախատեսվել է 1 250.0 հազար դրամ եկամուտ, արդեն իսկ ինն ամսում փաստացի հավաքագրվել է 1 250.0 հազար դրամը՝ տարեկան պլանը կատարվել է 100 %-ով,

ժ) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար փաստացի մուտքագրվել է 2 624.3 հազար դրամ,

ի)Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար տարեկան նախատեսվել է 750.0 հազար, ինն ամսում փաստացի հավաքագրվել է 900.0 հազար դրամ կամ տարեկան պլանը կատարվել է 120 %-ով,

լ) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար տարեկան նախատեսվել է 600.0 հազար դրամ, ինն ամսում փաստացի մուտքագրվել է 650.0 հազար դրամ:

3. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

1. Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհների գծով նախատեսված 1 613 973.2 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 1 652 865.6 հազար դրամ, այդ թվում՝

ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գծով նախատեսված 1 436 636.4 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 1 436 636.4 հազար դրամ կամ կատարվել է 100 %-ով:

բ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) գծով նախատեսված 2 336.8 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 2 336.8 հազար դրամ կամ կատարվել է 100 %-ով:

2. Պետական բյուջեից տրամադրվող կապիտալ պաշտոնական դրամաշնորհների գծով նախատեսված 175 000,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 213 892.4 հազար դրամ:

4. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Այլ եկամուտներից մուտքերի գծով նախատեսված 223 550.2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել 267 691.3 հազար դրամ կամ կատարվել է 119.7 %-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 39 583.9 հազար դրամով կամ 17.4 % -ով՝ այդ թվում.

1. Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության գծով նախատեսված 28 338.8 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 35 840.3 հազար դրամ կամ կատարվել է 126.5%-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 4 541.0 հազար դրամով կամ 14.6 % -ով :

2. Գույքի վարձակալության գծով նախատեսված 4 312.5 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 5 559.8 հազար դրամ կամ կատարվել է 128.9 %-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 3 686.0 հազար դրամով կամ 196.7 % -ով :

3. Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցների գծով պլանով նախատեսված 4 497.7 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորումը կազմել է 4 197.9 հազար դրամ:

4. Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց

ստացվող (գանձվող) վճարների գծով տարեկան նախատեսված 1 521,5 հազար դրամի փաստացի մուտքը կազմել է 4 855.6 հազար դրամ:

5.Տեղական վճարների գծով նախատեսված 160 100.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 168 293.2 հազար դրամ կամ կատարվել է 105.1 % - ով, այդ թվում աղբահանության վճարների գծով նախատեսված 56 720.3 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 58 171.4 հազար դրամ կամ կատարվել է 102,6 % - ով: Տեղական վճարների հավաքագրումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 8 323.2 հազար դրամով կամ 5.2% - ով:

6. Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարների գծով նախատեսված 16 800.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 7 609.5 հազար դրամ:

7. Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներից նախատեսված 900.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1 605.0 հազար դրամ:

8. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտների գծով փաստացի մուտքը ինն ամսում կազմել է 35919.7 հազար դրամ :

ԾԱԽՍԵՐ

2025 թվականի ինն ամսում կատարվել է 2 234 975.3 **հազար դրամի ծախս, որը կազմում է տարեկան պլանի՝ 4 013 335,8 հազար դրամի, 55.7%-ը: Ծախսերի դասակարգումն ըստ գործառնական նշանակության հետևյալն է.**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ կատարվել է 524 754.9 հազար դրամի ծախս, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 13,4%-ը,այդ թվում՝

1. Օրենսդիր և գործադիր մարմիններ՝ 01 բաժին 1 խումբ 1 դաս, հատկացվել է 300 101.8 հազար դրամ ծախս,

2.Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ 01 բաժին 6 խումբ 1 դաս, հատկացվել է 224 653.1 հազար դրամ ծախս,

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ կատարվել է 409 418.3 հազար դրամի ծախս, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 18,3%-ը,այդ թվում՝

1.Ոռոգում՝՝ 04 բաժին 2 խումբ 4 դաս, հատկացվել է 69 915.9 հազար դրամ,

2. Ճանապարհային տրանսպորտ՝ 04 բաժին 5 խումբ 1 դաս, հատկացվել է 415 243.6 հազար դրամ,

3. Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր՝ 04 բաժին 9 խումբ 1 դաս, նախատեսված -60 000,0 դիմաց փաստացի մուտքերը կազմել են -75 741.2 հազար դրամ :

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ Աղբահանում՝ 05 բաժին 1 խումբ 1 դաս, կատարվել է 270 198.7 հազար դրամի ծախս, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 12.1 %-ը:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ՝ կատարվել է 174 632.7 հազար դրամի ծախս, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 7.8 %-ը, այդ թվում՝

1.Ջրամատակարարում 06 բաժին 3 խումբ 1 դաս, հատկացվել է 127 731.8 հազար դրամ,

2.Փողոցների լուսավորում 06 բաժին 4 խումբ 1 դաս, հատկացվել է 40 360.9 հազար դրամ,

3.Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)՝ 06 բաժին 6 խումբ 1 դաս, հատկացվել է 6 540,0 հազար դրամ:

ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ՝ կատարվել է 84 038.8 հազար դրամի ծախս, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 3,8%-ը.

1.Գրադարաններ՝ 08 բաժին 2 խումբ 1 դաս, հատկացվել է 24 179.2 հազար դրամ,

2.Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ՝ 08 բաժին 2 խումբ 3 դաս, հատկացվել է 25 378.9 հազար դրամ,

3.Այլ մշակութային կազմակերպություններ՝ 08 բաժին 2 խումբ 4 դաս, հատկացվել է 34 480.7 հազարդրամ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ կատարվել է 771 931.9 հազար դրամի ծախս, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 34.5 %-ը, այդ թվում՝

1.Նախադպրոցական կրթություն՝ 09 բաժին 1 խումբ 1 դաս, հատկացվել է 62 4260.5 հազար դրամ,

2.Արտադպրոցական դաստիարակություն՝ 09 բաժին 5 խումբ 1 դաս, հատկացվել է 14 7671.4 հազար դրամ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ծրագրով ծախսեր չեն կատարվել:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ՝ Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ 11 բաժին 1 խումբ 2 դաս՝ նախատեսված գումարը կազմում է 806 040.1 հազար դրամ, որից 678 350.0 հազար դրամը նախատեսվում է հատկացնել ֆոնդային բյուջեով կատարվող ծախսերի ֆինանսավորմանը, հաշվետու ժամանակահատվածում հատկացվել է 150 000.0 հազար դրամ:

2025 թվականի ինն ամսում ընթացիկ ծախսերի /վարչական բյուջե/ ֆինանսավորմանը հատկացվել է 165 4386.2 հազար դրամ, որը փաստացի կատարված ծախսերի 74 %-ն է: Ընթացիկ ծախսերից աշխատանքի վարձատրության հոդվածին հատկացվել է 337 118.5 հազար

դրամ կամ վարչական ծախսերի 20.4 %-ը, ծառայությունների և ապրանքների ձեռք բերմանը հատկացվել է 261 045.0 հազար դրամ կամ 15.8 %-ը: Սուբսիդիաների տեսքով ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին է հատկացվել համայնքի վարչական բյուջեի փաստացի կատարված ծախսերի 47.5 %-ը կամ 785 990.6 հազար դրամ: Դրամաշնորհ է հատկացվել վարչական բյուջեի ծախսերի 0.6 %-ը, այլ ծախսերին է տրամադրվել 0.5 %-ը:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքային բյուջեի ծախսերի 32.7 %-ը կամ 730 589.1 հազար դրամն ուղղվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը, այդ միջոցներից 25 344,4 հազար դրամը տրամադրվել է շենքերի և շինությունների կառուցմանը, 739 045.3 հազար դրամը՝ շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման հողվածին, 25 881.6 հազար դրամը՝ մեքենաներ և սարքավորումներ ձեռք բերելու համար, 11 059.0 հազար դրամը հատկացվել է նախագծահետազոտական աշխատանքների ձեռք բերմանը, 5 000,0 հազար դրամը՝ հողի ձեռք բերմանը: Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերն արտացոլվում են ծախսերում բացասական նշանով, 2025 թվականի ինն ամսում տարեկան նախատեսված -60 000,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են -75 741.2 հազար դրամ :

ԲՅՈՒՋԵԻ ՍԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՖԻՑԻՏԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Արմավիր համայնքի բյուջեի 2025 թվականի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 602 808.9 հազար դրամ, իսկ ինն ամիսների փաստացի հավելուրդը կազմել է 780 823.4 հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2025 թվականի N 126-Ա

ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի կողմից գնված և համայնքի սեփականություն հանդիսացող միակողմանի տրանսպորտային լուսացուցերը՝ հավելվածին համապատասխան, անհատույց օգտագործման իրավունքով, անորոշ ժամկետով տրամադրել «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի լուսավորություն» ՀՈԱԿ-ին՝ երթևեկության կանոնակարգման նպատակով շահագործելու համար:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՐՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 14
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2025թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-ի
ԹԻՎ 126-Ա ՈՐՈՇՈՒՄ

Անվանումը	Մոդել	ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ	ՔԱՆԱԿ	ԳԻՆ /դրամ/	ԳՈՒՄԱՐ /դրամ/
1.Լուսացույց տրանսպորտային, միակողմանի	Լուսացույց տրանսպորտային, միակողմանի - ELL-TLT-1-300,	03.10.2025թ.	8	360 000	2 880 000
ԸՆԴԱՄԵՆԸ			8		2 880 000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2025 թվականի N 127-Ա

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 151-Ն որոշումը և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 2 մսուր-մանկապարտեզ», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 4 մսուր-մանկապարտեզ», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 7 մսուր-մանկապարտեզ», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 8 մսուր-մանկապարտեզ», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 9 մսուր-մանկապարտեզ», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի մսուր-մանկապարտեզ», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի արվեստի դպրոց», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի երաժշտական դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի շախմատի դպրոց» ՀՈԱԿ-ների տնօրենների՝ 2025 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 5147, 5148, 5149, 5150, 5151, 5152, 5153, 5154 և 5155 զեկուցագրերը և արտոնություններ ստանալու նպատակով ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերը՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայություններից օգտվողների համար տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի արտոնությունը կիրառել՝ համաձայն հավելված 1-ի:

2.Համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայություններից օգտվողների համար տեղական վճարի դրույքաչափի 50 % նվազեցում արտոնությունը կիրառել՝ համաձայն հավելված 2-ի:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և տարածվում 2025 թվականի հոկտեմբերի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՐՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 14
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի
ԹԻՎ 127-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶՐՈՅԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐ

1.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 2 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ներքոնշյալ սան

1. Զեյնալյան Միքայել Միհրի

2.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 4 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ներքոնշյալ սան

1. Հովսեփյան Արտյոմ Սուրենի

3.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 7 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ներքոնշյալ սաներ

1. Նիկոլյան Աբել Ավետիքի
2. Ջամալյան Կարեն Վարդանի

4.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 9 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ներքոնշյալ սաներ

1. Ստեփանյան Սարգիս Հայրապետի
2. Ջինիսյան Կարինա Կամոյի

5.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ներքոնշյալ սաներ

1. Հովհաննիսյան Արփի Ռաֆֆիի
2. Առաքելյան Մարկ Գագիկի

6.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի ներքոնշյալ սաներ

1. Հակոբյան Հենրիտա Արթուրի
2. Հակոբյան Մարատ Արթուրի
3. Հայրապետյան Մարիամ Ռոբերտի

7.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի ներքոնշյալ սան

1. Սաժումյան Ստյոպա Բագրատի

8.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի շախմատի դպրոց» ՀՈԱԿ-ի ներքոնշյալ սան

1. Նիկողոսյան Խոսրով Արթուրի

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի
ԹԻՎ 127-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ 50% ՆՎԱՋԵՑՈՒՄ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐ

1.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 4 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ներքոնշյալ սաներ

1. Հակոբյան Կորյուն Սասունի
2. Հակոբյան Նարեկ Սասունի

2.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 8 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ներքոնշյալ սան

1. Սարգսյան Հովհաննես Արթուրի

3.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 9 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ներքոնշյալ սան

1. Սողոմոնյան Գագիկ Աշոտի

4.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ներքոնշյալ սան

1. Ուսոյան Ռուստամ Արմենի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2025 թվականի N 128-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 164-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 27-ի ««Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2025 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Արմավիր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 153-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 164-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՐՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 14
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի
ԹԻՎ 128-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի
ԹԻՎ 164-Ա ՈՐՈՇՄԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Աշխատողների քանակը-24
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորները	1 միավորի պաշտոնային դրույքաչափը(դրամ)
1	Տնօրեն	1.0	170.000
2	Փոխտնօրեն	1.0	130.000
3	Հաշվապահ	1.0	125.000
4	Գրադարանի մասնաճյուղի պատասխանատու	6.0	118.000
5	Առաջին կարգի գրադարանավար	6.0	115.000
6	Գրադարանավար	7.0	115.000
7	Հավաքարար	2.0	115.000
8	Ընդամենը	24.0	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2025 թվականի N 129-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԱԶԱՏԱՐ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԸ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ԱՐՄԱՎԻՐԻ ԳԳՄ-ԻՆ ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-689-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով.

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի 110-րդ թաղամաս 315/1 հասցեում գտնվող գազատար խողովակաշարը անհատույց օգտագործման իրավունքով, անորոշ ժամկետով հանձնելուն՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արմավիրի ԳԳՄ-ին (վկայական՝ N13102025-04-0013, L=264.1 L1=258.1, L=349.8 L1=329.8, L=446 L1=409.9, L=369.1 L1=346.7, L=290 L1=280, L=297.4 L1=281.4, L=63.9 L1=63.9, L=658 L1=633.1, L=826.9 L1=770.4, L=94.8 L1=78.8, L=180.2 L1=172.2, L=294.8 L1=273.7, L=219.6 L1=203.6, L=194.6 L1=191.6, L=219.1 L1=211.1, L=537.7 L1=375.8, L=152.7 L1=142.7: Ընդհանուր արժեքը՝ 65 780 121 ՀՀ դրամ):

2. Առաջարկել Արմավիր համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով ապահովել սույն որոշումից բխող իրավական ձևակերպումները:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԱՅԿ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՐՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱՋ

ՆԱՋԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 14
ք. Արմավիր